ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

ՓԱՐՈՍ Paros

ISSUE 34 – MAY / ԹԻՒ 34 – ՄԱՅԻՍ 2020

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դշ 13 Մայիս – Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալ մարմնի հերթական ժողովին: Առցանց այս ժողովին արծարծուեցան զանազան հարցեր անոնք ըլլան պիւտճէական թէ կազմակերպչական:

Դշ 13 Մայիս – Այս տարի 100ամեակն է Սեւրի Դաշնագրի կնքումին (10 Օգոստոս 1920): Սրբազան Հայրն ու Դիւանապետ Նշան Պասմաճեան մասնակցեցան Լիբանանի Ազդակ Օրաթերթի կազմակերպած առցանց զրոյցին: Նիւթ՝ «Սեւրի Համաձայնագիրին ու իրաւարար վճիռին ուղղութեամբ Ակադեմիայի իրականացուցած աշխատանքներն ու ծրագիրները»: Զեկուցաբեր՝ Փրոֆ Աշոտ Մելքոնեան, Հայաստանի Ազգային Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի Տնօրէն: *Ջումի* միջոցաւ զրոյցին մասնակցեցան երեսունի մօտ հետաքրքիր ազգայիններ, աշխարհի զանազան երկիրներէն, որոնց կարգին Սիտնիէն Պրն Վահէ Արթինեան եւ Դոկտ Դրօ Քորթեան: Համադրող՝ Պրն Մինաս Հանսքէհեան: Զեկոյցը, մօտ 35 վայրկեան, կ'ընդգրկէր պատմական իրողութիւններ եւ իրաւական մանրամասնութիւններ Սեւրի, Լօզանի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերուն, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ. Սեւրի վճիռին հիման վրայ պէտք է ձեւաւորել եւ արծարծել հայութեան իրաւական պահանջները որպէս հետեւանք հայրենազրկումի եւ ըստ այնմ հատուցում պահանջել: Մասնակիցներուն կողմէ եղան բազմաթիւ հարցումներ, որոնց բոլորին, մանրամասնութեամբ պատասխանեց Դոկտ Մելքոնեան: Քաջալերելի այս ձեռնարկը երրորդն էր լսարանական շարքի մը, որուն սկսած է Ազդակ: Արժէ յիշեցնել որ Լսարանական Դրութիւն ստեղծած էր Առաջնորդարանը եւ առաջին հանդիպումը տեղի ունեցած էր Փետրուար 26ին, զեկուցաբերն էր հոգեբուժ Տոքթ Յարութիւն Ճէպէճեան «Հոգեբանութիւն եւ Աստուածաբանութիւն» նիւթով: Այս մասին օրին անդրադարձած էինք (տես Փարոս Թիւ 31 Փետրուար 2020): Կարելի է լսարանական հանդիպումները առցանց շարունակել զանոնք հեռաստեղով Ազդակի օրինակով:

Եշ 14 Մայիս – Առաւօտուն Սրբազան Հայրը առցանց կատարեց շաբաթական հերթական Սուրբ Գրոց Սերտողութիւնը հաւատացեալ տիկիններուն հետ ի ներկայութեան 20ի շուրջ մասնակիցներու: Երեկոյեան, Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանային, կատարեց Սուրբ Գրոց սերտողութիւն Եկեղեցւոյ Երիտասարդներուն համար, երկրորդը իր տեսակին մէջ, նիւթ ունենալով Քրիստոսի Ծնունդը ըստ չորս Աւետարանիչներուն: Բաղդատական տուեալները մեծապէս հետաքրքրեցին երիտասարդները, որոնք բազմաթիւ հարցումներ ուղղեցին Սրբազան Հօր եւ որոնց սպառիչ պատասխան տուաւ ան: Առցանց այս սերտողութիւնները տեղի պիտի ունենան երկշաբաթեայ դրութեամբ:

Ուրբ 15 Մայիս – Փարոսի խմբագրութիւնը ուրախ է յայտնելու որ Ուրբաթ 15 Մայիս 2020ին խմբագրութեան յանձնուեցաւ 2018 թուականի Փարոս Լրատուի լաթակազմ հատորը ձեռամբ Տիար Բաբգէն Զարզաւաճեանի: Մի քանի ամիս առաջ Պրն Զարզաւաճեան, որ կազմարարութեան արուեստին ծանօթ է, ի գնահատանք Փարոսի խմբագրութեան տարած տեղեկատուական

լուրջ աշխատանքին, առաջարկեց որ ինք անձամբ պիտի կազմէ ցարդ հրատարակուած Փարոսի թիւերը՝ տարի առ տարի: Յիշեցնենք որ Փարոսի առաջին թիւը լոյս տեսաւ Օգոստոս 2017ին եւ որ առանց ընդմիջումի կը շարունակուի հրատարակուիլ ցայսօր: Խմբագրութիւնս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Տիար Բաբգէն Զարզաւաճեանին իր գնահատանքին համար եւ կը մաղթէ որ ան մնայ առողջ ու կայտառ, ծառայելու համար Հայ եկեղեցւոյ եւ Հայ համայնքին, ինչպէս անցեալին նաեւ ապագայ տարիներուն:

Եշ 21 Մայիս – Համբարձման տօնին առթիւ Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց, որ առցանց հեռաստեսուեցաւ հաւատացեալներուն: Պատարագին ընկերակցեցան Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան եւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Անհանգստութեան պատճառով Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեան չկարողացաւ մաս կազմել Պատարագին, սակայն ան հիւանդանոցէն կարողացաւ առցանց հետեւիլ: Փարոսի խմբագրութիւնը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ սիրելի Տէր Հօր: Իր քարոզին մէջ Սրբազան Հայրը անդրադարձաւ Համբարձման խորհուրդին եւ մաղթեց որ պսակաձեւ ժահրի պարտութենէն ետք մարդկութիւնը, մասնաւորապէս հայութիւնը, վերանորոգ վճռակամութեամբ վերսկսի իր բնականոն կեանքին: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Հայրապետական Օրհնութիւն:

Կիր 24 Մայիս – Ուէնթուըրթվիլի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցին առժամապէս հոգեւոր հովիւ չունի, Սրբազան Հայրն ու Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ քահանայ հայրերը այդ բացը կը գոցեն փոխն ի փոխ պատարագելով այնտեղ: Սրբազան Հայրը կատարեց համբարձման պատարագ եւ յաւուր պատշաճի քարոզեց: Պատարագը առցանց հեռաստեսուեցաւ հաւատացեալ ժողովուրդին: Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ պատարագեց Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը: Աւագ Քահանայ Տէր Նորայր Փաթանեան չկարողացաւ մասնակցիլ Պատարագին անհանգստութեան պատճառաւ: Փառք Տիրոջ որ երկու քահանայ հայրերը՝ Տէր Նորայր եւ Տէր Պարթեւ ապաքինեցան եւ վերադարձան եկեղեցի:

Կիր 24 Մայիս – Սրբազան Հայրը եւ դիւանապետ Նշան Պասմաճեան առցանց մասնակցեցան Նիւ Սաութ Ուէյլզ Էքիւմենիք Խորհուրդին կազմակերպած Էքիւմենիք Աղօթքին ի խնդիր Քրիստոնէական միասնութեան եւ ոգեկոչելու համար Յովհաննէս Պօղոս Պապի կոնդակին *Ut Unum Sint: on Commitment to Ecumenism* 25ամեակը: Հաւաքին մասնակցեցան 48 հոգեւոր հայրեր եւ եկեղեցւոյ ծառայող անձեր Անկլիքան, Կաթոլիկ, Իւնայթինկ, Ղպտի, Ասորի, Քուէյքըրզ եւ Հայ Առաքելական եկեղեցիներէն: Օրուան պատգամը փոխանցեց Ասորի եկեղեցւոյ Առաջնորդ Մար Միլիս Զայա: Սրբազան Հայրը Անգլերէն լեզուով կարդաց Գործք Առաքելոցի 28րդ գլուխէն համարներ 1էն 10 իսկ փակման աղօթքը կատարեց երգելով « Օրհնեցից զՏէր յամենայն ժամ»ը: Զաիա Արքեպիսկոպոսին քարոզ-պատգամը կը հրապարակենք Փարոսի անգլերէն բաժինին մէջ:

Գշ 26 Մայիս – Սրբազան Հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին: Ամիսներ ետք կարելի եղաւ ժողովը գումարել Առաջնորդարանին մէջ պահելով իրարմէ մէկուկէս մեթր հեռաւորութիւն եւ պետութեան կողմէ թելադրուած կանոնները: Ժողովը լսեց Սրբազան Հօր եւ երեք ծուխերու թեմական ներկայացուցիչներու միամսեայ գործունէութեան զեկոյցը եւ առաւ գործնական որոշումներ զանոնք համադրելով պսակաձեւ ժահրի հանգրուանային անհետացման գործընթացին:

Ուրբ 29 Մայիս – Սրբազան Հայրը Զուումի միջոցաւ հարցազրոյց ունեցաւ ԲԱՐԵԻ հեռատեսիլի կայանի տնօրէն Պրն Վարդան Ապտոյի հետ՝ Նիւ Ճըրզի: Նախ Սրբազանը իր ցաւակցութիւնը յայտնեց Նիւ Ճըրզիաբնակ ազգային եկեղեցական մեծ ծառայութիւն ունեցող բժիշկ Րաֆֆի Յովհաննէսեանի մահուան առիթով: Բժիշկը անձնական բարեկամն էր Սրբազան հօր եւ կը տառապէր քաղցկեղէ: Ան եղած է Արեւելեան թեմի Թեմական Խորհուրդի անդամ եւ տիկնոջ Շողակին հետ, միասին տասնամեակներ շարունակ, իր նիւթաբարոյական աջակցութիւնը բերած Հայ եկեղեցւոյ, Հայ արուեստին, Հայաստանին, Ջաւախքին եւ Արցախին: Անոր յիշատակը անմար պիտի մնայ: Սրբազանը նաեւ բացատրութիւն տուաւ Աւստրալիոյ կացութեան մասին Պսակաւոր Ժահրի հետ առնչուած: Պարոն Վարդանի հարցին պատասխանելով Սրբազան Հայրը վեր առաւ նահանգապետուհի Գլատիս Պէրէճիքլեանի կազմակերպչական կարողութիւնները, որոնց շնորհիւ վերջին ութ ամիսներու աղէտներուն (երաշտ, հրդեհներ, հեղեղներ եւ Պսակաւոր ժահր) բերած չարիքներուն դէմ ան լաւապէս կրցաւ պայքարիլ եւ պետական անձի իր բոլոր արժանիքները ի սպաս դրաւ ժողովուրդին զայն փրկելով մեծ վնասներէ: Սրբազանին հարցազրոյցը կարելի է ամբողջութեամբ դիտել հետեւեալ Լինքով https://www.youtube.com/watch?v=Xw1apGLyqOM&t=12s:

Կիր 31 Մայիս – Հոգեգալստեան տօնին առիթով եպիսկոպոսական պատարագ մատուցեց Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Առաջնորդ Սրբազան Հայրը: Պատարագին ներկայ էին համեմատաբար աւելի թիւով հաւատացեալներ արդիւնք՝ Պսակաւոր Ժահրի տարածման դէմ պետական սահմանափակումներու մեղմացման:

Կրկնելու գնով կրնանք ըսել որ Հայ համայնքը կարգապահ վերաբերում ունեցաւ եւ գործակցեցաւ Ժահրի դէմ պայքարելու պետութեան միջոցները կիրարկելով: Սրբազան հայրը տուաւ նաեւ իր քարոզ պատգամը Հոգեգալստեան տօնին առթիւ: Ան մէջբերեց Ղուկասու Աւետարանին եւ Գործք Առաքելոցին մէջ յիշատակուած Սուրբ Հոգիի գալուստը Առաքեալներուն, երբ անոնք Վերնատան մէջ կ'աղօթէին եւ զանոնք վերափոխեց: Սուրբ հոգին կոչուած է Շնորհաբաշխ, որովհետեւ Ան շնորհքներ է որ տուաւ Առաքեալներուն, այդ ահ ու սարսափի մատնուած ձկնորսները դարձնելով խիզախ եւ համարձակ: Իրենց շնորհքները ի գործ դնելով անոնք սկսան քարոզել Քրիստոսի խօսքն ու Անոր խօսքին յաւիտենական պատգամը, զարմացնելով ունկնդիրները: Սուրբ Հոգին կոչուած է նաեւ Մխիթարիչ, Ուղղութիւն Տուող, որովհետեւ իւրաքանչիւրիս ցաւը մխիթարողը Ինքն է եւ մեզի ուղիղ ճամբան ցոյց տուողը: Հետեւաբար Հոգեգալստեան տօնը իրականութեան մէջ իւրաքանչիւրիս տօնն է: Սրբազան Հայրը պատգամեց իւրաքանչիւրիս որ Սուրբ Հոգիով զօրացնենք մեր հաւատքը եւ Անոր բաշխած շնորհքներն ու Աստուծոյ սէրը մեր գործով ու վերաբերումով վերադարձնենք Աստուծոյ:

Կիր 31 Մայիս – Երեկոյեան, Սրբազան Հայրը ACYAի երիտասարդներուն հետ կատարեց Սուրբ Գրոց Սերտողութիւն նիւթ ունենալով Մկրտութիւնը : Ան անդրադարձաւ պատմական իրողութիւններու եւ բացատրեց իմաստը Քրիստոսի մկրտութեան Յովհաննէս Մկրտիչի կողմէ, Առաքեալներու վերագրուած մկրտութեանց եւ ընդհանրապէս մկրտութեան խորհուրդին մասին: Աւելի քան 12 երիտասարդներ ներկայ եղան եւ իրենց հարցումներով աւելի հետաքրքրական դարձուցին առցանց այս հանդիպումը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻ՛ 6
30 Մայիս 2020

Հաղորդագրութիւն թիւ 5ով (12 Մայիս) յայտնած էինք մեր սիրեցեալ ժողովուրդին, որ Պասկաձեւ Ժահրի պատճառով դրուած սահմանափակումները մեղմացած են:

Այն ինչ կը վերաբերի եկեղեցիներու, 1 Յունիսէն սկսեալ Նիւ Սաութ Ուէյլզի մէջ 20 անձեր պիտի կարենան մասնակցիլ Պասկի արարողութեանց, 50 անձիք յուղարկաւորութեանց եւ Պատարագներու ու տարբեր եկեղեցական արարողութեանց, միշտ յարգելով իրարու մէջ 1.5 մեթր հեռաւորութիւն պահելու օրէնքը:

Անգամ մը եւս կը յիշեցնենք մեր համայնքի զաւակներուն, որ ժահրը չէ անհետացած եւ մարդկութիւնը անոր դէմ վերջին յաղթանակը չէ տարած: Հետեւաբար, կը խնդրենք այս շրջանին գերզգուշ ըլլալ, մնալ կարգապահ ինչպէս նախորդ ամիսներուն, բծախնդիր կեցուածք ցուցաբերել յօգուտ մեր շրջապատին առողջութեան եւ յաւելեալ խնամք տանիլ բոլոր անոնց որոնք խոցելի են եւ կրնան աւելի արագ վարակուիլ Պասկաձեւ Ժահրէն:

Սրբազան Հայրը, Թեմական Խորհուրդը եւ Եկեղեցական հայրերն ու Ծխական մարմինները կու գան իրենց շնորհակալութիւնը յայտնելու մեր բարեպաշտ ժողովուրդի զաւակներուն իրենց օրինապահ քաղաքացիի վերաբերումին համար, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք առցանց կանոնաւոր կերպով մասնակցեցան եւ կը շարունակեն մասնակցիլ Կիրակնօրեայ Պատարագներուն եւ արարողութեանց:

Առողջութեան մաղթանքով՝
Դիւան Առաջնորդարանի
Սիտնի 30 Մայիս 2020

Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոն

Ամէն ինչէ գերադաս համարելով Հաւատքի, Յոյսի եւ Սիրոյ տեսլականը, Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոն-(ՍՊԸ)ը ճիգ ի գործ կը դնէ համապարփակ ծառայութիւն տալու եւ ձեռնարկներ կազմակերպելու Նիւ Սաութ Ուէյլզի իր աւստրալահայ անդամ/անդամուհիներուն: Ծրագիրները կը վերաբերին մեծահասակներուն, գաղթող Հայերուն եւ երիտասարդ մայրերուն:

Պասկաւոր Ժահրի պարտադրած ընկերային ինքնամեկուսացումի պատճառով, աւելի քան կարեւոր էր համայնքի մեծահասակներուն զօրակցութիւն ցուցաբերելը եւ անոնց հետ կապի մէջ մնալը: Այս առիթով, տարբեր նախաձեռնութիւններ կատարուեցան ինչպէս օժանդակութիւն՝ շուկայէն գնումներու, բժշկական ժամադրութիւններու, հեռաձայնային հաղորդակցութիւններու եւ մատակարարուեցան ընկերային ժամանցի եւ արուեստի փաթեթներ:

Վերջերս ՀՀԲԿն արձանագրուեցաւ որպէս բարեգործ ոչ շահաբեր ընկերակցութիւն, ճանաչուած Աւստրալական Հարկային Գրասենեակին կողմէ եւ ստացաւ նուիրատուութեանց համար հարկերու նուազեցման կարգավիճակ: Այս կ'ենթադրէ որ ՀՀԲԿին նուիրատուութիւններ կատարող նուիրատուները կրնան վայելել հարկային պետական օրէնքին բարիքները:

Արդ, եթէ ոեւէ անհատ կը փափաքի ՀՀԲԿին նուիրել, թող բարեհաճի կապ հաստատել գրասենեակին հետ, հեռաձայնի թիւ՝ 94196394:

Յարգանօք՝
Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոն

Կ'ուզէինք մեր համայնքի մեծահասակ Հայրիկներուն ու Մայրիկներուն ուշադրութեան յանձնել թէ այսուհետեւ բազմալեզու հրատարակութեանց մէջ լոյս տեսնող պետական բոլոր յայտարարութիւնները տրամադրելի պիտի ըլլան Հայերէն լեզուով:

Կ'ուզէինք դարձեալ յիշեցնել թէ Պսակաձեւ Ժահրի շրջանին ժամանակաւորապէս կասեցուցած էինք մեր սովորական միատեղ հանդիպումները եւ այդ առնչութեամբ մեր ծրագիրներու կիրարկումը, սակայն Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնը (ՀՀԲԿ) շարունակեց եւ կը շարունակէ հնարաւորինս իր օգտակարութիւնը բերել հաղորդակցութեան զանազան միջոցներով (հեռաձայնային կապ, Ֆէյսպուք, Ուաթսափ, Ֆէյս Թայմ, Վայպըր), ինչպէս նաեւ օգնելով շուկայէն գնումներուն, բժիշկի հետ ժամադրութեանց, HotDoc ծրագրի միջոցաւ առողջապահական խորհրդատուութեան եւայլն:

ՀՀԲԿի խմբակը նախաձեռնեց նոր եւ շատ հետաքրքրական ծրագրերու, որոնց միջոցաւ՝ զբաղուած պահելու մեր մեծահասակները զանոնք յատկապէս իրարու հետ հաղորդակցութեան մէջ պահելու համար: Անոնցմէ վերջինը ուղարկումն էր «Կարօտ»ի եւ «Բարի կեցութեան մաղթանք»ի փաթեթներ, որոնցմէ իւրաքանչիւրը կը պարունակէր գեղարուեստի առնչուած փոքր հաւաքածոյ մը: հաւաքածոյին միջոցաւ զայն ստացողը գաղափար կը կազմէր թէ ինչպէս կրնար ան «Յետ Պսակաձեւ Ժահր 19» ին մասնակցիլ արուեստի ցուցահանդէսի մը: Անակնկալ էր մեզի համար տեղեկանալ թէ արդէն շատեր սկսած էին միտքեր փոխանակել եւ նոյնիսկ ստեղծել իրենց արուեստի կտորները:

Այս ծրագիրը փաստեց թէ խմբային աշխատանքը որքան քաջալերուած էր համայնքային շրջանակին մէջ ընդհանրապէս եւ եկեղեցւոյ շրջանակին մէջ՝ մասնաւորապէս: Կիրառումը այս ծրագրի առաջին մասին տեղի ունեցաւ փաթեթները իրենց ձեռքով հասցնելով մեր հայրիկ-մայրիկներուն բնակավայրերը ձեռամբ՝ Սրբազան Հօր, Թեմականի անդամ Տիար Գէորգ Չափրազեանի եւ իր տիկնոջ՝ Մարինայի, ՀՀԲԿի ատենադպրուհի Տիկին Զեփիւռ Մուրատեանի, Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամներ Տիարք Գեղամ Անուշեանի, Աբիկ Կէօզուգարայեանի եւ Արա Գօփուշեանի, ինչպէս նաեւ ՀՀԲԿի կամաւորներ՝ Ծովինկին եւ իր ամուսնոյն՝ Սեպուհին, Րօմէլային եւ իր ամուսնոյն՝ Սարգիսին, ՀՀԲԿի մէջ աշխատաող Տիկին Ռիմա Չէյթըրին եւ եկեղեցւոյ գրասենեակի պատասխանատու Տիկին Լիզա Գօփուշեանին: Այսպիսով, անոնք ժպիտ մը աւելցուցին մեր մեծահասակներուն դէմքերուն վրայ:

Այս դժուար օրերուն կոչ կ'ուղղենք մեր համայնքի բոլոր մեծահասակներուն դիմել ՀՀԲԿի գրասենեակ եթէ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուին: Գրասենեակի հեռաձայնի թիւն է 94196394 եւ բաց է ամէն Երեքշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ, առաւօտեան ժամը 9էն կէսօրէ ետք ժամը 3:

Համբերութիւն կը մաղթենք բոլորին եւ յուսով ենք որ շուտով կը վերադառնանք մեր բնական կեանքին:

Յարգանօք՝
Երէցկին Յասմիկ Համբարձումեան
ՀՀԲԿի Համայնքային Զօրակցութեան եւ Համակարգումի Պատասխանատու

DIOCESAN NEWS

Wednesday 13 May - The Primate His Eminence Archbishop Haigazoun Najarian presided over the periodic committee meeting of the Armenian Community Welfare Centre. The online meeting discussed various matters, pertaining to budgetary and administrative arrangements.

Wednesday 13 May - The 100th anniversary of the Treaty of Sèvres will be marked on 10 August this year. The Primate and Chancellor Nishan Basmajian participated in an online forum organised by the Lebanese Armenian newspaper *Aztag*. The topic was the "Sèvres Agreement and the strategies adopted in relation to the prospects of reparation". The presenter at the forum was Professor Ashod Melkonian – the Director of the National Academy of Sciences in the Republic of Armenia. The forum hosted on Zoom included close to 30 interested participants from around the world, including in Australia, Mr Vahe Artinian and Dr Tro Kortian. Mr Minas Hanskeian was the moderator. The 35 minute presentation covered the historic events and the legal components of the treaties of Sèvres, Lausanne, Moscow and Kars and the recognition of the Armenian Genocide. On the basis of the Treaty of Sèvres, a call for compensation needs to be structured and advanced in the response to the denial of the legal rights of the Armenian people. The participants raised various questions which were addressed by Professor Melkonian. It was an encouraging meeting, the third of its kind, organised by the *Aztag* newspaper. It is worth mentioning that similar Lecture evenings were initiated by the Diocese this year, the first was held on 26 February, with psychiatrist, Dr Harutyun Jebejian on the topic of "Psychology and Theology" (Paros No 31, February 2020). It is possible to continue these lectures online also.

Thursday 14 May – Archbishop Najarian led the weekly Bible Study session, with the participation of faithful ladies of close to 20. With the accompaniment of parish priest Father Avetis Hambardzumyan, the Archbishop also led a Bible Study session with the ACYA young adults. It was the second such study session held on the topic of Christ's Birth, as recorded in the four gospels. The evidence of their sound credibility was very interesting for the participants who directed their questions to Archbishop and satisfied with his responses. These online bible study sessions will continue fortnightly.





Friday 15 May - The Paros editorial team is delighted to share with its readers that on this day, Mr Papken Zarzavatjian presented the Diocese a beautifully bound compilation of the 2018 editions of Paros. A few months ago, Mr Zarzavatjan, who has experience in this area, commended the work undertaken with the publication and offered his assistance to personally compile the editions year by year. As a reminder, the first issue of Paros was printed in August 2017 and has continued monthly to the present day, without interruption. The editorial team extends deepest appreciation to Mr Papken Zarzavatjian for the initiative and it is our hope he remains energised to serve the Armenian Church and Armenian community well into the future as he has in the past.

Thursday 21 May - On the occasion of the Ascension of Christ, Archbishop Najarian celebrated Holy Mass, live streamed online for the viewing of the community faithful. Participating were parish priests, Father Norayr Patanian and Father Avetis Hambardzumyan. Due to his hospital admission, Father Bartev Karakashian was unable to participate physically but did so via the live feed. The Paros editorial team wishes a speedy and complete recovery to our dear Father Bartev.
In his sermon, Archbishop Najarian reflected on the significance of the Ascension and expressed his hope that after the restrictions of this pandemic are lifted, society, in particular the Armenian people will resume their normal lives. The Pontifical Blessing was conducted following Holy Mass.

Sunday 24 May - As Holy Trinity Church Wentworthville does not yet enjoy its own parish priest, the Primate and Holy Resurrection Church priests officiate alternate weeks. Archbishop celebrated Holy Mass on the Feast of the Ascension and delivered a sermon relevant to the occasion. The Holy Mass was posted live on social media for the participation of the community faithful. In Holy Resurrection Church Father Avetis Hambardzumyan celebrated Holy Mass. Archpriest Father Norayr Patanian was unable to participate as he had taken ill. Praise God, both Father Norayr and Father Bartev have recovered and have since resumed their church ministry.

Sunday 24 May – Archbishop Najarian and Chancellor Nishan Basmajian participated in an online ecumenical service organised by the NSW Ecumenical Council for the Week of Prayer in response to Pope Francis' call to the Church's irrevocable commitment to the task of ecumenism on the 25th anniversary of Saint John Paul II's encyclical Ut Unum Sint: on Commitment to Ecumenism. The participants of the meeting numbered 48 clerics and laypersons of the Anglican, Catholic, Uniting, Coptic, Assyrian, Quakers and Armenian Apostolic denominations. The day's sermon was delivered by the Primate of the Assyrian Church Archbishop Mar Meelis Zaia. Archbishop Najarian read in English from the book of Acts, Chapter 28:1-10 and delivered the closing prayer, singing '*Orhnetzek zDer amenayn jum'.* Archbishop Zaia's sermon can be read on page 9.

Tuesday 26 May – Archbishop Najarian presided over the periodic Diocesan Council meeting. After several months, it was possible to hold the meeting in the Diocesan Centre, in line with the social distancing rules, keeping the 1.5m distance in seating. The meeting heard the monthly activity reports of the Archbishop and the three Parish Diocesan Council representatives, also discussed measures and processes as restrictions on places of worship are eased.

Friday 29 May – Archbishop took part in an online Zoom interview with the director of *Parev TV* New Jersey, Vartan Abdo. Archbishop took the opportunity to offer his condolences on the passing of New Jersey resident, Dr Raffi Hovhannesian. The doctor was a personal friend of the Archbishop, who succumbed to cancer. The deceased was a member of the Eastern Diocese and with his spouse Shoghag supported the Armenian Church, Armenian Arts, Armenia, Javakhk and Artsakh. His memory will continue to live on. Archbishop Najarian also gave an overview of the impact of COVID-19 in Australia. Responding to Mr Abdo's question, he praised the organisational capabilities of our Premier Hon Gladys Berejiklian, who over the last eight months of disasters - drought, fires, floods and the Coronavirus, in her role as the Leader of the Government,

fought tirelessly for the people of the state, and avoided a far greater impact in each case. The Archbishop's interview may be viewed on the following link https://www.youtube.com/watch?v=Xw1apGLyqOM&t=12s

Sunday 31 May – On the occasion of the Feast of Pentecost, Archbishop Haigazoun Najarian celebrated Episcopal Holy Mass. With the State Government's decision to ease restrictions, a comparably larger number of faithful were present to participate in Holy Mass. We reiterate, that the Armenian community has abided by the rules and regulations deemed necessary during this pandemic. In his sermon, the Archbishop reflected on the Feast of Pentecost; quoted from the passages in the Gospel of Luke and the Book of Acts when the Apostles were gathered in the upper room praying and were transformed by the power of the Holy Spirit. The Holy Spirit is called the Bestower of Graces, as He poured graces upon the Apostles; those bewildered and terrified fishermen became brave and bold. Putting these graces into action, they began preaching Christ's Word and His eternal message, amazing their listeners. The Holy Spirit is also named Comforter, and Counsellor because He is the comforter of our pains and our guide onto the right path. Therefore, in reality, the Feast of Pentecost is a holy day for each one of us. Archbishop urged us to repay God by our deeds and behaviour, strengthened in our faith by the power of the Holy Spirit and our God given graces.

Sermon link on Youtube: https://www.youtube.com/watch?v=-ywfLqxZf8g

Sunday 31 May – In the evening, Archbishop Najarian led the Bible study session on Zoom with the ACYA young adults, the topic was Jesus' Baptism. He reflected on the historical evidences and explained the significance of Christ's baptism by the hand of John the Baptist, the Apostles' perspectives and the concept of baptism in general. More than 12 young adults were present and with their perceptive questions made the online study more engaging.

SERMON BY MAR MEELIS ZAIA
Week of Prayer, 24 May 2020

On June 2014, I joined a group of bishops from USA and local Church leaders in Iraq, to visit the displaced Christian, Yezidis and Muslim families from Nineveh, who were driven out of their ancient city by ISIS terrorists, to the northern part of Iraq.

I stood shocked at the scale of suffering of these families especially their children, who stood looking at us, with their bewildered eyes, having many questions to ask, of why this happened, when and how we will be able to help them out of their sorrow and torment. How can the world allow this to happen in the 21st century, a century described to give a new beginning to a more peaceful world based on dialogue, harmony, respect of human rights and dignity?.

I could see these families sleeping, taking church sanctuaries and altars as temporary homes and bedrooms for themselves and their children.

But out of this tragic seen I felt a sense of hope, seeing churches, regardless of their denominations, helping Muslims and Yezidis in every way possible.

You could see Evangelical, Lutherans, Catholics, Orthodox, Anglicans and many more from Europe, North America and Australia, on daily basis, distributing financial support, food items, blankets and medicines to all families.

A true act of kindness towards non-Christians. I witnessed the spirit of real brotherhood among all Christians regardless of their denominations. It was encouraging to see many Christian groups opening their arms to one another.

Satan tried to destroy the spirit of these families, disunite them, but his evil acts failed, resulted in bringing Christians, Muslims and Yezidis more together in a spirit of cooperation, kindness and brotherhood.

June 2014 was like the storm Paul encountered on his way to Rome. The refugees of Mosul represented Paul's journey. The hospitality and care offered by the Churches and others represented the people who showed unusual kindness to Paul and his companions.

We Christians, learn this kindness from the work of our Lord and teacher Jesus Christ. He is the perfect model for all of us who follow Him.

When he fed crowds of people, it was because he was concerned about their hunger. He was motivated by kindness. When He healed the sick, it was not only to show His divine powers. In fact, He often asked people not to tell anyone. He was just moved to compassion because of His basic kindness, humanity, in its true, real and ultimate representation. In that first century world, women and children didn't matter to most men. But Jesus included women in His inner circle and He rebuked the disciples when they tried to keep children away from Him.

Jesus was concerned about everybody. He had compassion for everybody: Jews, Samaritans, Gentiles, lepers, sinners, thieves, - everybody! He expressed that compassion in kindness. On these principles the disciples went "and proclaimed the good news everywhere, while the Lord worked with them and confirmed the message by the signs that accompanied it"

One of His best-known parables, the parable of the Good Samaritan, is about one person helping another person in need. It's about human kindness.

It was so important to Jesus, in fact, that He made it the essential mark of authentic discipleship. He said, "*This is how people will know that you are my disciples, if you have love for one another.*" Not if you believe all the right things. Not if you pray a lot. Not if you give a tithe of your income. Not if you worship in the right way. Those are all good and important things, but the way we show that we belong to Him is that we love one another, and that we act out our love by being kind to one another and to our neighbor. Of course, the reason we are to do that, and the reason we are able to do that is because of God's kindness toward us. The Bible says, "*We love because He first loved us.*" Or, as what Paul said to the Ephesians: "*Be kind to one another, tender-hearted, forgiving one another, as God in Christ has forgiven you.*"
So, God is kind to us, loving us, forgiving us, guiding us, strengthening us, blessing us, and we pass that on by being kind to one another.

Our faith is about loving God, but it is also about loving our neighbor. It is about doing good with no expectation of a reward. It is about following the example of a Good Samaritan and a kindly innkeeper and the people who greeted Paul and

his companions. It is about acting with kindness and decency. We need to be reminded of God's love. We need to renew our sensitivity to the needs of the people we encounter. We need to be reminded that kindness, hospitality and decency are possible in our world. In fact, they are an essential ingredient in what it means to be a follower of Jesus.

It is important to recognize that the people of the Bible understood hospitality as a virtue. The early Christians thought so much of it that they required it of their leaders and urged all believers to practice it.

In our day and age, it may not always be practiced in exactly the same ways, but hospitality is still an important way we put our Christian faith into practice.

There's a wonderful story about Saint Francis, the kindly thirteenth century monk, who one day informed his brethren that he planned to go into the nearby village on a preaching mission. He invited a novice to go along. On their way, they passed an injured man and Francis promptly stopped, saw to the poor fellow's needs and arranged medical care for him.

They went on and soon passed a homeless man who was near starvation. Again, Francis stopped his journey and ministered to the hungry, homeless man. So it went, through the day: people in need, Francis lovingly caring for them as best as he could until the sun was low in the sky. He told his novice friend it was time for them to return now to the monastery for evening prayers.

But the young man said, "Father, you said we were coming to town to preach to the people." Francis smiled. Then said, "My friend, that's what we've been doing all day."

The Proverbs reminds us to *"Never let loyalty and kindness get away from you! Wear them like a necklace; write them deep within your heart. Then you will find favour with both God and people and you will gain a good reputation*." Proverbs 3:3-4

The world today needs more compassion.

Matthew says, "*when Jesus saw the crowds, he had compassion for them, because they were like sheep without a shepherd*" (Matt 9:35-38).

Jesus felt the pain of love. Everything He did was rooted in His compassion. The stern words, the comforting words, the healing words, the forgiving words, all had their root in the pain of love. All His miracles grew out of the pain of love. Never did Jesus do a miracle just for the sake of a miracle itself. He sees pain, a hurt, a sorrow, a loss and the pain of love causes Him to reach out to touch, to lift, to help, to heal, to forgive, to transform, to encourage, and to challenge.

It is the compassion God felt for His creation that caused Him to send Jesus Christ into the world. God took on human flesh, and came into our experience. The pain of love was the motive force behind that incarnation. "*For God so loved the world that he gave His only begotten Son, that whoever believes in Him should not perish but have everlasting life*" John 3:16.

In conclusion Isaac of Nineveh, a 7th-century Syriac bishop and theologian best remembered for his written works on Christian asceticism, and regarded as a saint in the Assyrian Church of the East, writes:
"Conquer evil people by gentle kindness, and make zealous people wonder at your goodness. Put the lover of legality to shame by your compassion".

He continues, "*There is love like a small lamp, which goes out when the oil is consumed; or like a stream which dries up when it doesn't rain. But there is a love that is like a mighty spring gushing up out of the earth; it keeps flowing forever, and is inexhaustible".*

We do believe that God is revealed in Jesus Christ. And the overwhelming image that Jesus gives us of God is that of compassion.

To be kind and compassionate requires us to go beyond ourselves and our limited-purview. We must seek to satisfy the needs of others. Kindness and compassion are not easy characteristics to exemplify; yet they are part and parcel of Paul's formula, which goes beyond time and place. In order to live a life of holiness, patterned on the life of Jesus, Paul presents us with basic qualities that we must weave into the fabric of our own life. He says we must be people of compassion, kindness, humility, meekness, patience, and to bear with one another.

The example Christ has set is to be followed by those who call themselves by His name. Christ has given us the power to make a difference in other people's lives. We must bind our compassion, kindness, humility, meekness, and patience together in love through service to others. If we can do this in the peace of Christ, then the love Paul calls us to manifest will most assuredly reign in our hearts.

Paul goes on to say that we have all been called to find this peace for it unites us as one body. We can never be a true community of faith if we do not live in harmony and compassion towards one another. Christ calls us to be one. As He says in John's gospel, "*That they may all be one. As you, Father, are in me and I am in you, may they also be in us, so that the world may believe that you have sent me*"

May the Lord make us instruments of His peace, hope and compassion, Amen

Communique 6
30/05/2020

To our faithful in Australia and New Zealand

With Communique 5 (12 May), we informed our faithful community of the easing of some restrictions that had been imposed as a result of the Coronavirus (Covid-19).

Further easing of restrictions for places of worship will take place in NSW from 1 June which will allow 20 people to participate in weddings, 50 people at funerals and during Holy Mass as well various church services, at all times maintaining the 1.5 metre social distancing regulation.

Once again we remind our community faithful, the virus has not disappeared and humanity has not yet been able to triumph over it. Therefore, we ask our community faithful to remain vigilant and disciplined as in these past months, to show diligence in caring for themselves and those around them, and to take extra care of those who are most vulnerable and susceptible to contracting Covid-19.

The Primate, the Diocesan Council, Reverend Fathers and Parish Councils come to express their gratitude to our faithful community members for their adherence as law-abiding citizens, as well as to all those who regularly participate in the online Sunday Liturgy and services.

Stay healthy always.
Chancellery of the Diocese of the Armenian Church of Australia & New Zealand
Sydney, 30 May 2020

Armenian Community Welfare Centre

With our vision of Faith Hope and Love above all else, the Armenian Community Welfare Centre Limited (ACWC Inc) strives to deliver a comprehensive range of welfare services and activities to vulnerable members in the Australian Armenian Community in NSW. These programs include providing assistance to the aged and elderly, refugees and young mothers.

Due to the social isolation resulting from the COVID-19 pandemic lockdown, it has been more important than ever for the community's elderly to feel supported and connected. This has involved increased activities such as shopping assistance, attending doctor's appointments, telecommunications and providing care / social packages such as the arts sets.

Recently, the ACWC has been registered as a charity with the Australian Not-for-Profit and Charities Commission and has been endorsed by the Australian Taxation Office ATO as a deductible gift recipient. This means that donations and gifts to the ACWC are now tax deductible for donors.

If you would like to donate please contact the ACWC office on (02) 9419 6394.

Friends of the Diocese

Archbishop Haigazoun Najarian
Mr & Mrs Sarkis & Alice Der Bedrossian
Mr & Mrs Kevork & Marina Tchaprazian
Dr & Mrs Artin & Maro Jebejian
Mr & Mrs Avo & Jackie Tevanian
Mr & Mrs John & Taleen Marcarian
Holy Resurrection Church
Mr Henry John

Mr John Nazarian
Dr & Mrs Garo & Laura Artinian
Messrs Hratch & Zohrab Keverian

Mr & Mrs Diran & Virginia Vahratian
Mrs Ello Meguerditchian,
Alexander & Robert Yaghjian Family
Mr & Mrs Hagop & Asdghig Aladjadjian

Mr & Mrs Noubar & Gina Mazloumian
Dr & Mrs Assadour & Gracy Ekmejian
Mr & Mrs Jack & Sirvart Elmassian

The ACWC Team has initiated new exciting projects to keep the seniors entertained, socially connected and busy. One recent example was delivering a small "Miss You & "Stay Well" package which included an art/craft kit to provide seniors with some ideas on how each person can contribute to our upcoming "Post COVID-19" Art Exhibition. At our surprise, many had already started to brainstorm and create their unique elements.

This project has demonstrated the great team-work and collaboration we have in our community and especially in the church. The first part of the project which was delivering the packages, has been made possible with thanks to His Eminence Archbishop Haigazoun Najarian, Diocesan Councillor Mr Kevork Tchaprazian, our very own Marina Avagyan-Tchaprazian, ACWC Committee Secretary Mrs Zepur Mouradian, Reverend Father Avetis Hambardzumyan and his fellow Parish Councillors Messrs Kegham Anoushian, Apig Geozikaraian and Ara Kopoushian, our dedicated ACWC volunteers Dzovig and her husband Sebouh, Romela and her husband Sarkis, ACWC support worker Mrs Rima Chater and Mrs Liza Kopoushian all lending a hand with the distribution.

All of these people contributed enormously to make this project happen and put smiles on many faces. It is well said "there is no exercise better for the heart than reaching down and lifting people up".

The project had its successful start. We look forward to the artworks of our much loved seniors as we set up an exhibition to demonstrate how well the seniors in the Armenian Community could combat the virus and come out of it in such a positive and inspiring way.

In these difficult times, if any of our community elders require support services, please contact the ACWC Centre immediately and our staff will do their very best to provide the help you need. We can be reached on 9419-6394 on Tuesday, Wednesday and Friday from 9.00 a.m. to 3.00 p.m.

Best wishes,
Yereckin Hasmik Hambardzumyan
ACWC Community Welfare Support Coordinator

Thank You to
Dr & Mrs Artin & Maro Jebejian
for their ongoing support

To discuss sponsoring an issue of Paros
or placing a business advertisement,
please contact Mrs Laura Artinian on 0409049304